

ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇՈՒՇԱ ԲԴԵՇԽԻ ԿՆԻՔԻ
ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

«Էջմիածին» ամսագրի 1999-ի №4-ում լույս տեսավ մեր հոդվածը՝ նվիրված Սերբոսի «Պատմության» նախերգանքի առաջին նախադասութ-
յանը. «Եւ եղև ի նուաղիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հա-
յաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վռամշապուհ արքայի տիրէ ի
վերայ սորա ազգն Կարքեղովմայեցի¹ իշխանութեանն²: Խորհուրդ ի ձեռն
առեալ ահեղ և մեծամեծ քաղէից և ամենայն գլխաւոր նախարարաւքն
թագաւորութեան իւրոյ՝ ըստնալ ի Հայաստան աշխարհէ զբարեպաշտու-
թեան պտուղս»³: Այստեղ, եթե նկատի չառնենք նախադասության մեջ
առկա «աղբն Կարքեղովմայեցի իշխանութեանն» ըստերը, որոնք, ինչպես
կտեսնենք ստորև, մեր վերոհիշյալ հոդվածում մեկնաբանվել են, մնացածի
իմաստը պարզ ու հստակ է. 428 թ., Հայ Արշակունիների Հարստության
վերացմամբ, Հայաստանում Հաստատվում է Սասանյանների տիրապե-
տությունը: Մոզպետների («մեծամեծ քաղէից») և արքայից արքայի նա-
խարարների միաբանությամբ, փորձ է արվում Հայաստանում վերացնել
քրիստոնեությունը:

Ուսումնասիրողների համար գայթակղության քար հանդիսացավ նա-
խադասության «ազգն Կարքեղովմայեցի» ըստերը, որոնց վերաբերյալ
տրվեցին մեկը մյուսից տարօրինակ ու անհամողիչ, ինչպես նաև զարմա-
նալի բացատրություններ: Դրանց մենք մանրամասն անդրադարձել ենք⁴:
Քանի որ սուլյն հոդվածի նյութը հանդիսացող Աշուշա բղբշխի կնիքի հու-
նարեն արձանագրությունն անմիջականորեն կապվում է Սերբոսի «Պատ-
մության» վերոհիշյալ «առեղծվածային» ըստերի հետ (մի բան, որ նկատել
են բոլոր ուսումնասիրողները), ապա անհրաժեշտ է հակիրճ ներկայացնել

¹ Ճիշտ ընթերցումը Կարքեղովմայեցի է: Գրիչները, և ոչ միայն, «ո»-յի տեղում հունա-
րեն օմեգայի (ω) ազդեցության տակ, դարձրել են «ով» (ինչպես հոովմայեցի, բեովտացի,
իթովպացի, կապադովկացի, Ենովք, Թովմաս, Յովհաննէս, Յովսէփ, Սիմովն և այլն):

² Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են:

³ Պատմութիւն Սերբոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 64:

⁴ «Էջմիածին» հանդեսի խմբագրությունը առանց մեզ տեղյակ պահելու, կամայակա-
նորեն կրճատել էր խնդրին վերաբերող Գ. Աբգարյանի նկատողությունների քննությունը,
չուրջ երկու էջ, ստացվում է, որ հարցի վերջին և մանրամասն հետազոտությունը մեր
ուշադրությունից «վրիպել է»: Մեր հարցին, թե ինչու՞ է խմբագիրն այդպես անտակտ
վարվել, բացատրությունն ավելի քան տարօրինակ էր. որովհետև Սերբոսի «Պատմության»
հրատարակիչը վախճանված է: Իայց վախճանված են և՛ Բ. Պատկանյանը, և՛ Ստ. Մալխաս-
յանցը և շատ ուրիշներ, նրանց կարծիքներն ինչու՞ է թողել: Թերևս խմբագիրը որոշակի
ժամանակաահաման է գծել, քանի՞ տարի պետք է անցնի հեղինակի վախճանից, որպեսզի
թույլատրվի նրա կարծիքը քննության ենթարկել... Էլ չենք խոսում վիտացող վրիպակների
մասին:

դրանց վերաբերյալ մեր հետազոտության արդյունքները: «Կարքեղովմայեցի» բառի մեջ առկա է իրանական Կարքա դո Մայը (նաև՝ Կարքա դո Մայչան), հունա-հռոմեական աղբյուրներում՝ Մեսենե, Եփրատի գետաբերանում, որը III դ. 70–90-ական թվականներին մեծ նշանակություն ստացավ: Այն զրադաշտական կրոնի խոշոր կենտրոն էր: Մայչանի սահմաններում էին գտնվում Հրո տաճարներ, մոզերի հաստատությունը՝ «Մագուստանը» (մոզաստանը), որտեղ յուրաքանչյուր տարի զոհաբերվում էին մեկ տարեկան գառներ, մատուցվում գինի և ցորեն: Այդ զոհամատուցումները կատարում էր անձամբ արքայից արքան, իսկ տաճարները գտնվում էին նրա հովանավորության ներքո: Դժվար է չնկատել երկու տվյալների բացարձակ համընկնելը՝ մոզեր + թագավորական իշխանություն և «մեծամեծ քաղաքայք + գլխաւոր նախարարք»: Հիշենք և Եղիշի գրածը. «... տիրեցին Հայոց ազգն Սասանայ պարսկի (թագավորական իշխանություն), որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոզուցն»⁵:

Մեզանից երկու տարի առաջ խնդրին անդրադարձել էր պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, որի հոդվածը, ղժբախտաբար, մեր ուշադրությունից վրիպել էր⁶: Մանրամասն ներկայացնելով խնդրո առարկա «Կարքեղովմայեցի» բառի վերաբերյալ տարբեր հետազոտողների եզրակացությունները, նա գրել է. «IV-VII դարերում մեզանում պարսիկները հիրավի (!) ճանաչվել են որպես Կարքեղովմայեցի»⁷: Առաջ անցնելով նշենք, որ կարքեղովմայեցի չի նշանակում պարսիկ, դա էթնանուն չէ, այլ ածական, որոշակի անձի ծննդյան, սերման, ծառայության և այլնի վայր՝ «Կարքեղովմայեցի», որ պարտադիր չէ նշանակեր պարսիկ, այդ քաղաքից կարող էին սերել ցանկացած էթնոսի ներկայացուցիչներ: Կարքեղովմայեցի - պարսիկ բացատրությունը տրվել է 150 տարի առաջ և նույնն է մինչև օրս: Առաջիններից էր Ք.Պատկանյանը: Նա Սեբեոսի «Պատմության» իր ուղևորներին թարգմանության համապատասխան տեղը ծանոթագրելիս գրել էր. «Թեև այս (կարքեղովմայեցի - Ն. Բ.) անվան տակ պիտի պարսիկներ հասկանալ, բայց մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այդ անվանումը»⁸:

«Ազգն Կարքեղովմայեցի»-ն ուսումնասիրության առարկա է դարձրել վրացի գիտնական Կ.Կեկելիձեն, ով, հարկավ, սխալ է բացատրում Սեբեոսի նախադասությունը, թե խոսքը «Սասանյան Հարստության» է վերաբերում⁹, այսինքն՝ Կարքեղովմայեցի - Սասանյան իշխանություն: Այստեղ մանրամասն կանգ առնել Սեբեոսի «Պատմության» դիտական-քննական

⁵ Եղիշի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: Ի լոյս ընծայեալ բաղդատուութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 6:

⁶ Պ. Մ ու ը Ր ա դ յ ա ն. «Կարքեղովմայեցի/Քարկեղոն» ընթերցումը վաղմիջնադարյան աղբյուրներում. - «Միտն», Հուլիս-դեկտեմբեր, 1997, էջ 306-311: Բարձր գնահատելով իր կատարած աշխատանքը Սեբեոսի խնդրո առարկա նախադասության վերաբերյալ, նա նպատակահարմար է գտել հասցնել այն միջազգային ընթերցողին լոյս ընծայելով նաև իտալերեն թարգմանությունը. La lezione "Karkedovn/Kalkedon" nelle fonti armene altomedievali. - Il "Romanzo di Alessandro" e altri scitti. Roma, 1998, p. 189-195. Հոդվածի մասին մենք տեղեկացանք Հեղինակի «Տպագիր աշխատությունների մասնագիտություն»-ից (Երևան, 2003): Աշխատություն № 225: Հոդվածի իտալերեն հրատարակությունը՝ № 235:

⁷ Պ. Մ ու ը Ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 311:

⁸ История императора Иракла. Сочинение епископа Себеоса, писателя VII века. Пер. с арм. К. П. Патканяна, СПб., 1862, с. 23, примеч. 48.

⁹ Պ. Մ ու ը Ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 308:

բնագրի հրատարակիչ Գ. Աբգարյանի հարցին նվիրված երկարաշունչ բացատրությունների վրա, անիմաստ է, քանի որ, ինչպես ցույց է տվել պրոֆ. Պ. Մուրադյանը, նրա եզրակացությունը մի տեսակ ծաղկաքաղ է տարբեր հեղինակների բացատրությունների, որով «ազգն Կարբեղովմայեցի իշխանութեանն» «սրբագրվում» և «ուղղվում» է որպես «ազգն (չար Քաղեայց) իշխանութեանն», որ իբր Սեբեոսի Կարբեղովմայեցի-ն «չար Քաղեայց»-ի աղավաղումն է¹⁰: Բայց հիմնական խնդիրը «կարբեղովմայեցու» ո՞ր էթնոսին պատկանելը չէ, խոսքը չի վերաբերում մեկ ժողովրդի տարբեր անվանմանը (հոմանիշին), այլ «կարբեղովմայեցի» բառի էությունը բացատրությանը: Որ նրանք տվյալ դեպքում պարսիկ են, դա հաստատելու համար շատ խելք ու քրտինք պետք չէ, էլ ովքե՞ր պիտի լինեին հայ Արշակունիների հարստության վերացումից հետո Հայաստան երկրին տիրողները, ովքե՞ր պիտի լինեին «Քաղեայց», ովքե՞ր պիտի լինեին եղիշեի պարսիկ Սասանի ազգն ու մոզերը: Միանգամայն գովելի է Ք. Պատկանյանի 150 տարի առաջ արտահայտած, վերևում բերված, միտքը. «Թեև այս (կարբեղովմայեցի - Հ.Բ.) անվան տակ պիտի պարսիկներ հասկանալ, բայց մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այդ անվանումը»¹¹: Նա առաջ էր քաշում անվանման բացատրության հարցը, նրա համար հիմնախնդիրը հենց դա էր, մնացածը յուրաքանչյուր ոք կարող էր բացատրել:

«Կարբեղովմայեցու» և «պարսկի» միջև հավասարության նշան դնելով, ուսումնասիրողները թույլ են տալիս մի սխալ ևս: «Պարսիկ» է և՛ համադանցին, և՛ կտեսիփոն-տիղրոնցին, և՛ արբելացին, Ատրպատականի գանձակեցին և այլն, և այլն, բայց նրանք «կարբեղովմայեցի» չեն, իր հերթին կարբեղովմայեցին կարող է պարսիկ լինել, բայց նա համադանցի չէ՛, կտեսիփոնցի-տիղրոնցի չէ՛, արբելացի, գանձակեցի չէ՛, նա կարբեղովմայեցի է:

Ինչպես նկատեցինք, սույն հոդվածի նպատակը մեր դրույթները կրկնությունը չէ, յուրաքանչյուր ոք, կարդալով պրոֆ. Պ. Մուրադյանի և մեր հոդվածները, կարող է իր համար պարզել խնդրի էությունը, որոշել իրականությունը, այլ Գուգարաց Աշուշա բղեշխի բազմաչարչար կնիքի հունարեն արձանագրության՝ [ΑΣ]ΟΥΣΑΣ ΠΙΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ ճիշտ ընթերցումն ու բացատրությունն է: Այդ առեղծվածի լուծման ուղղությամբ բազում ուսումնասիրություններ են արվել, գեո 1824-ին կնիքի առաջին հրատարակիչ է. Վիսկոնտին թարգմանել է «Աշուշա Iben Carchediani-ների բղեշխ»¹², որ Պ. Պետերսը իրավամբ բնորոշեց որպես ծիծաղելի¹³: Վիսկոնտիից հետո խնդրին շատերն են անդրադարձել, բայց իմաստ չունի կանգ առնել բոլորի կարծիքների վրա, քանզի դրանք մեկը մյուսից տարօրինակ են: Կանգ առնենք Մխիթարյան Հայրերի կարծիքների վրա: Ղևոնդ Ալիշանը «Հայապատում»-ում տվեց այսպիսի թարգմանություն. «Աշուշա բղեշխ վրաց կարխիդաց» հարցականով և

¹⁰ Պատմութիւն Սեբէոսի, էջ 64:

¹¹ История императора Иракла, с. 23, примеч. 48.

¹² E. Q. V i s c o n t i. Iconografia greca II. Milano, 1824, p. 357-360. Pl. XVI, № 10.

¹³ P. P e e t e r s. Sainte Sousanik Martyre en Arméno-Géorgie. "Analecta Bollandiana", T. 53 (1935).

ավելացրեց. «Ետքի անունս անծանոթ է, ըստ մեզ պետք էր ըլլալ Գուգարաց»¹⁴: Հ. Տաշյանը պարզապես կանգ առավ կնիքի արձանագրության վերջին՝ ΚΑΡΧΗΔΩΝ բառի վրա և նշեց, թե «վերջին բառս այսպես գրված է, բայց խնդիր է, թե ինչ ուզած է ըսել անով քանդակիչը»¹⁵: Հարցին ավելի մանրամասն անդրադարձել է Ն. Ակիրյանը: Նախ և առաջ նա կանգ է առել կնիքի արձանագրության տիրոջ՝ Աշուշայի անվան պակասավոր (ΟΥΣΑΣ) գրության վրա և միանգամայն արդարացի նշել, թե «ΟΥΣΑΣ անունն ապահովապես քանդակչին վրիպակավն, ինչպես նկատված է, թերի է, և առ հասարակ ամենեն լրացված է ΑΣ հավելվածով, որով կստացվի Աշուշա անվան հունական ձևը»¹⁶: Ն.Ակիրյանն ավարտում է իր միտքը. «Համենայն դեպս արդի գրվածքը քանդակող արվեստագետին մեկ վրիպակն ըլլալու է. վրիպակի գոյությունն ակնհեր է. և կարելի է առանց վարանելու Գուգարք թարգմանել»¹⁷:

Ն. Ակիրյանի հոդվածին իսկույն անդրադառնում է Կ. Տեր-Սահակյանը¹⁸. «Գաթրճյան, Ալիշան, Մաքարտ՝ Իվիրոն Քարխիտոն թարգմանած են վրաց Գուգարաց, բայց

1. Հունարեն Γωγαρηνη կըսվեր Գուգարքը ոչ թե Καρχηδοι¹⁹

2. Եթե Καρχ-ը ենթադրենք Koukarch-ի²⁰ սխալագրությունը՝ ηδ մասնիկը աննպատակ կմնա:

Այս դժվարությունները սակայն, — շարունակում է հոդվածագիրը, — ներողամտության հանդիպած են և բոլոր հանցանքը բարդված է հույն քանդակագործին վրա, որ միակ պատասխանատուն նկատված է իր սխալագրությանը»:

Ն. Ակիրյանի անունը չտալով, Կ. Տեր-Սահակյանը նրան է ակնարկում և քննադատության ենթարկում նրա բացատրությունները, գրելով. «Հանդես Ամսորյայի հոդվածագիր մը ավելի հառաջ երթալով, կհամարի որ քանդակագործը հիրավի Γωγαρηνη ուզած է գրել, բայց չփոթած է գայն ... Կարքեդոնի հետ»²¹: Կ. Տեր-Սահակյանը «լուծում է» խնդիրն այսպես. «Աշխարհագրական անունը ամենեն ավելի նմանաձայն է Կարխեդի՝ Վրաստանի մեջ, Կախեթը (որուն հնագույն ձևը կրնար Կարխիդ ըլլալ»²²: Եվ շարունակում է. «Καρχηδών-ը Կարխեդ-աց մեկնելու համար՝ մեզ անհրաժեշտ էր միայն այսքանը գիտնալ՝ որ Քարթլ և Կախեթ Վրաստանի քաղաքական երկու մեծ բաժումներն էին, ուստի Աշուշա կրնար Կախեթի

¹⁴ Ղ. Ալիշան. Հայագատում: Պատմիչք և Պատմութիւնք Հայոց. Բ. Վենետիկ, 1905, էջ 184, ծանոթ.:

¹⁵ Հ. Տաշյան. Արշակունի դրամներ. — «Հանդես Ամսորյա», 1905, №6, էջ 170:

¹⁶ Ն. Ակիրյան. Աշուշայի կնիքը. — «Հանդես Ամսորյա», 1907, №21, էջ 122:

¹⁷ Նույն տեղում, էջ 124:

¹⁸ Կ. Տեր-Սահակյան. Աշուշայի կնիքը «Ιβηρών Καρχηδών». — «Բազմավեպ», 1907, Հ. 65, էջ 304–309:

¹⁹ Չենք սրբագրում հոդվածագրի հունարեն բառի բացահայտ վրիպակը:

²⁰ Արևմտահայ հոդվածագիրը Գուգարք-ը արտասանելով Քուգարք տառադարձնում է հունարեն Koukarch (!):

²¹ Կ. Տեր-Սահակյան. նշվ. աշխ., էջ 304:

²² Նույն տեղում:

վրա իշխած ըլլալ... Այնքան անտեղի բան մը ըրած չըլլար մեկը *Καρχηδών* ը Կախեթ մեկնելով»²³:

Մխիթարյան հայրերի բացատրություններն անընդունելի համարելով հանդերձ, մի բանում «արդարացվում են»։ նրանք Աշուշա բղեշխի կնիքի հունարեն արձանագրության *ΚΑΡΧΗΔΩΝ*-ը փնտրում են բղեշխի պաշտոնավարած շրջանում, և ոչ ... Աֆրիկայում, ինչպես կտեսնենք ստորև:

Վեճը Աշուշայի կնիքի *ΚΑΡΧΗΔΩΝ* բառի շուրջ շարունակվում է: Պետերսը, Սուրբ Շուշանիկի Վարքի թարգմանությանը կցած ծանոթագրություններում, հիշատակելով բառին տրված բազմաթիվ բացատրությունները, *ΚΑΡΧΗΔΩΝ* ընթերցումը անվիճելի է համարում, որի տակ նա անհրաժեշտ է գտնում տեսնել *ΠΙΤΙΑΞΗΣ*-ի (բղեշխի) կողմից կառավարվող տարածք: Նա առաջարկված երկու բացատրությունները (Գուգարք, Կախեթ) համարում է չարդարացված և ծիծաղելի է համարում կնիքի առաջին հրատարակիչ Վիսկոնտիի թարգմանությունը՝ «Iben Carchediani» և առաջարկում է *ΚΑΡΧΗΔΩΝ*-ը բացատրել *ΚΟΛΧΙΔΩΝ*, այսինքն՝ «Կոլխիդացիոց»²⁴: Այս բացատրությունը մերժվեց վրացագետների կողմից այն պարզաբանությամբ, որ «Իբերիան և Կոլխիդան 368 թվականից պետական տարբեր կազմավորումներ են, ուստի բղեշխության միասնական ինստիտուտ ունենալ չեն կարող»²⁵: Սակայն կարիք չկար նման բացատրությամբ հեռու գնալ, քանզի *ΚΟΛΧΙΔΩΝ* չի կարող լինել նախ և առաջ քերականական առումով: Ոչ ոք չի բացատրում *ΚΟΛΧΙΔΩΝ*-ի տակ ի՞նչ են հասկանում, տեղանուն, թե՞ էթնանուն՝ Կոլխիդայի, թե՞ կոլխիդացիների: Բայց բացառվում է ե՛լ մեկը, և՛ մյուսը: Եթե խոսքը վերաբերում է տեղանվան, ապա հունական բոլոր աղբյուրներում այդ տեղանվան եզակի ուղղականը *ΚΟΛΧΙΣ* (սեռականը՝ *ΚΟΛΧΙΔΟΣ*) է, տեղանունը հոգնակի չունի, եթե էթնանուն՝ ապա *Κόλχος* (սեռականը՝ *Κόλχου*), հոգնակի ուղղականը՝ *Κόλχοι* (հոգնակի սեռականը՝ *Κόλχων*): Դա պարզ ու հստակ ցույց է տվել Կ. Թումանովը²⁶: - *ΩΝ* (հոգնակի սեռական) վերջավորությունը կարող է ունենալ իրական սեռի եզակի չունեցող տեղանունը, որ հոգնակի ուղղականում - *ΑΙ* վերջավորությունն ունի: Օրինակի համար՝ *ΑΘΗΝΑΙ* (Աթենք), սեռականը՝ *ΑΘΗΝΩΝ*, *ΘΗΒΑΙ* (Թեբք), սեռականը՝ *ΘΗΒΩΝ*, *ΜΥΚΗΝΑΙ* (Միկենք), սեռականը՝ *ΜΥΚΗΝΩΝ* և այլն: *ΚΟΛΧΙΣ* (սեռականը՝ *ΚΟΛΧΙΔΟΣ*) տեղանունը միայն եզակի ունի:

Աշուշա բղեշխի կնիքի հունարեն արձանագրության վերջին բառի *ΚΑΡΧΗΔΩΝ*-ի առեղծվածի վրա կանգ է առել Կ. Թումանովը՝ նա հիմնավոր քննադատության ենթարկելով Ն. Ակինյանի, Կ. Տեր-Սահակյանի, Պ. Պետերսի բացատրությունները, փաստեց, որ Գարգմանի, Իբերիայի և «Գուգարքի կառավարող հարստությունները Սասանյան ծագում ունեն: Հարստության հիմնադիր Միհրանը Մովսես Կաղանկատվացու կողմից հիշված է որպես «Միրհեան, որ ի Սասանեան տոհմէ էր, եկեալ ի պար-

²³ Նույն տեղում:

²⁴ P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 275-276:

²⁵ Պ. Մ ու լ Ր ա ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 308:

²⁶ C. T o u m a n o f f. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, p. 188.

սից»²⁷: Կ. Թումանովը շարունակում է. «Գուգարքի տան հիմնադիր Պերոզը սուրբ Միրհյանի ազգական էր գալիս, Գուգարաց բղբշխ Աշուշան (ըստ Թումանովի՝ Աշուշա II-ը, վախճանված 470 թ. շուրջ՝ մեզ հետաքրքրող կնիքի տերը)՝ նրա հետնորդը, որ ինքզինքն անվանում է «Սասանյան» համարժեք բառով (Asusa II of Gogarene calls himself by equivalent of „Sassanid,»)՝²⁸: Ինչ էլ լինի, սպասելի էր, որ հեղինակը անդրադառնար կնիքի արձանագրության ΚΑΡΧΗΔΩΝ բառին, բայց, դժբախտաբար, որոշակի ոչինչ չի ասում: Թերևս «Սասանյան»:

Խնդրին լայնորեն անդրադարձել է պրոֆ. Պ. Մուրադյանը: Նա գրում է. «Առավել առեղծվածայինը, սակայն այդ նույն Կարքեղովն տեղանվան-էթնանվան ներկայությունն է Գուգարաց Աշուշա բղբշխի հունարեն կնիքի վրա, որ երկար ժամանակ զբաղեցնում է կովկասագետներին: Այստեղ կարդում ենք. ΟΥΣΑΣ³⁰ ΠΙΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ»։ Պ. Մուրադյանը թարգմանում է. «Աշուշա բղբաշխ Կարքեղովն վրաց»: Հարկավ, ընթերցումը ճիշտ է: Տեղի է ունեցել բառերի հերթականության չհիմնավորված տեղափոխություն: Օրինակ, ի՞նչ է նշանակում «Կարքեղովն վրաց»: Պ. Մուրադյանը ΠΙΤΙΑΞΗΣ-ին (բղբշխ) թողնում է միայնակ, երբ այն ունի լրացում ΙΒΗΡΩΝ - վրաց՝ «բղբաշխ վրաց»³¹: Ճիշտ ընթերցումն է. «Աշուշա բղբաշխ վրաց Կարքեղոն»: Նա այդպես (նաև Գուգարաց կամ Գուգարացուց) է կոչված և մեր բոլոր մատենագիրների երկերում. Փավստոս Բուզանդ՝ «զբղբաշխն Գուգարաց», Ղազար Փարպեցի՝ «բղբաշխն վրաց Աշուշայ», «Աշուշայի վրաց բղբշխի», Մովսես Խորենացի՝ «բղբաշխ Գուգարացուց», «ի բղբշխն Գուգարացուց Աշուշայէ»:

Պ. Մուրադյանը տալիս է կնիքի հունարեն բնագրի իր թարգմանությունը՝ «Աշուշա բղբաշխ Կարքեղոն վրաց» և բացատրում. «IV-VII դարերում Սասանյան Պարսկաստանը հիրավի (!) ճանաչվել է Կարքեղովն անունով ևս»³²: Բայց ի՞նչ է ստացվում, եթե Աշուշա բղբշխի կնիքի հունարեն արձանագրության իմաստին անդրադառնանք ըստ Պ. Մուրադյանի բացատրության. «Աշուշա բղբաշխ Պարսկաստան վրաց»։ Եղավ:

Աշուշա բղբշխի կնիքի հունարեն արձանագրության բոլոր ուսումնասիրողների կողմից սխալ իմաստավորումը բխում է ΚΑΡΧΗΔΩΝ (ԿԱՐՔԵԴՈՆ) բառի ոչ ճիշտ մեկնաբանությունից: Այստեղ ԿԱՐՔԵԴՈՆ-ը «տեղանուն» է (ըստ Պ. Մուրադյանի՝ Պարսկաստան), ինչպես, օրինակ, հետևյալ տեղանունները. ΑΣΚΑΛΩΝ (ԱՍԿԱԼՈՆ), ΑΥΛΩΝ (ԱՎԼՈՆ), ΚΤΗΣΙΦΩΝ (ԿՏԵՍԻՓՈՆ), ΣΙΔΩΝ (ՍԻԴՈՆ), ΧΕΡΣΩΝ (ԽԵՐՍՈՆ) և այլն, «էթնանուն» է, այլ ածական³³ է, նշանակում է կարքեղոնացի, վերևում

²⁷ Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ու ա գ ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի), Երևան, 1983, էջ 338-339:

²⁸ C. T o u m a n o f f. Նշվ. աշխ., էջ 184, 262:

²⁹ Նույն տեղում, էջ 478, ծանոթ. 174:

³⁰ Պետք է լրացնել [ΑΣ]ΟΥΣΑΣ - Աշուշա, ինչպես մինչ այդ «ամենն լրացված էր ΑΣ Հավելվածով» (Ն. Ա կ ի ն յ ա ն):

³¹ Պ. Մ ու Ր ա դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 308:

³² Նույն տեղում, էջ 311:

³³ Αχιλλέως Α. Τζαρτζάνου, Γραμματική τῆς ἀρχαίας Ἑλληνικῆς γλώσσης, Ἐν Ἀθήναις, 1938, σελ.63- 64.

մեր ցույց տված՝ կարճեղո(սայ)եցին (կնիքներում հապավումներն, տարածության սահմանափակության պատճառով, ինչքան ցանկանաս)։ Հմմտ. ΜΑΚΕΔΩΝ-Մակեդոնացի (ΑΛΕΞΑΝΔΡΟΣ ΜΑΚΕΔΩΝ - Ալեքսանդր Մակեդոնացի), ΛΑΚΕΔΑΙΜΩΝ (Լակեդեմոնացի), ΛΑΚΩΝ (Լակոնացի)։

Մենք գիտեինք կարճագոյնեցիներին ընդհանրապես։ Այժմ իմացանք և հանվանե մեկին, քանզի Սասանյան Պարսկաստանի բարձր պաշտոնատար անձ Գուգարաց բղեշխը, այն է՝ Աշուշան, կարճագոյնեցի էր, Կարթա դո Մայ(չան)եցի։ Կնիքի տեքստը թարգմանվում է այսպես. «Աշուշա բղեշխ վրաց Կարճեղո(մայ)եցի»։

Վերջում անդրադառնանք Դանիելի պարականոն յոթերորդ «Տեսիլքին»։ Այնտեղ գրված է. «Կարճեղովն և ազգ պարսից, զինչ հասանէ քեզ, ի վախճան աւուրց, դու ոչ դիտես. և ի կատարածին յաւիտենից, քանի՞ ինչ եղիցի ժամանակ քո. զկնի ամենայն քաղաքաց և գաւառաց. ի սովոյ ապականեալի քաղաքդ պաճուճեալ յոսկոյ և յարծաթոյ, և ազգ պճնեալ և զարդարեալ։ Անառակութիւնք բազումք եղիցին ի քեզ, և տղայք քո չբաւեսցեն ոսկւով, և ապա ի սովոյ ապականեսցին»³⁴։ Նույն յոթերորդ «Տեսիլքում» մեզ հետաքրքրող անվանումը հիշվում է մեկ անգամ ևս. «...ի դող գազանին երեքաւորեալ յազգէ պարսից ի Կարճեղովնի»։ Բերելով վերորդայալը, մենք Պարսկաստանի «Կարճեղովն»-ը նույնացրել էինք Կարթա դո Մայ(չան)ի հետ, և հավանական էինք համարել, որ պարականոնի հայ քրիստոնյա հեղինակն արդեն գիտե, ականատես է եղել պարսից պետության կործանմանը արաբական խալիֆայության հարվածների ներքո և տեղի ունեցածը «կանխագուշակում» է Դանիել մարգարեի բերանով։

Ելնելով ասվածից միանգամայն անհավանական է Պ. Մուրադյանի վստահորեն արտահայտված համոզմունքը, թե «Դանիելի տեսիլքում Պարսկաստան կոչված երկիրը տեղավորվում է (!) Աֆրիկայի Հյուսիսում, և այն նույնացված է Կարճեղովն/Կարթագենի հետ»³⁵։ Նա դա բացատրում է դժվարութայամբ կողմնորոշվելու մեր հնարավորություններից «վաղմիջնադարյան էթնոճանաչողութայան և աշխարհաճանաչողութայան շատ հաճախ պայմանական համակարգում», ապա ավելացնում է. «Կարելի է, սակայն, վստահ ասել, թե այն նշանակալիորեն տարբերվել է քարտեզագրվող մեր պատկերացումներից»³⁶։

Ինչքան էլ դժվար լինի կողմնորոշվել «վաղմիջնադարյան էթնոճանաչողութայան և աշխարհաճանաչողութայան... համակարգում», ինչքան էլ այն տարբերվի «քարտեզագրվող մեր պատկերացումներից», Դանիելի

³⁴ Թանգարան Հին և նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց. Վենետիկ, 1896, էջ 239: Բացի Ֆ.Մակլերի Ֆրանսերեն թարգմանությունից (F. Macler. Les Apocalypses apocryphes de Daniel), Դանիելի պարականոն Հայտնությունը երիցս Հրատարակել է անգլերեն Ն. Իսավերգենցը. The Uncanonical writings of the Old Testament found in the Armenian Mss of the Library of St. Lazarus, Venise. Transl. into English by Rev. Dr. Jacques Isaverdens, Venice, 1901 (1907, 1934): Մեզ հետաքրքրող հատվածը. «O Carthago and thou people of the Persians» (էջ 251), «by the Persian people of Carthago» (էջ 257): Ն. Իսավերգենցը հատուկ նշում է, թե իր թարգմանությունը տառացի է, և հայերեն բնագրի այն ամբողջ մասը անհասկանալի է (1934, էջ 257):

³⁵ Պ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 311:

³⁶ Նույն տեղում:

«Տեսիլքի» հեղինակն ինչ աստիճանի անուղեղ սլիտի լիներ, որ Արևելքում մինչև Հնդկաստան, Արևմուտքում մինչև Բյուզանդական կայսրություն, հարավում՝ Պարսից Մոց, իսկ հյուսիսում՝ Կասպից ծով ու շորապահակ հասնող Ասիայի Սասանյան անձայրածիր կայսրությունը տեղափոխեր Աֆրիկա և «տեղափոխեր» Լիբիայի Կարթագեն քաղաքում: Դեռ հարց է, «Տեսիլքի» հեղինակը Կարթագեն/Կարթագենի մասին գաղափար ունե՞ր: Աֆրիկայի հյուսիսը օդաչափով թռչելու կազմում է շուրջ 4500 կիլոմետրից ավելի, իսկ նշանավոր Հաննիբալի Կարթագենը գտնվում էր «Պարսկաստան կոչվող երկրից», ավելի ճիշտ՝ նրա արևմտյան սահմանից, 3000 կիլոմետր հեռու: Ծիշտ է, սլարականոնի հեղինակը չէր չափում մետրերով, բայց նա չէր կարող մի ամբողջ կայսրություն մի քաղաքի մեջ թխմեր ...

РАЗРЕШЕНИЕ ЗАГАДКИ ГРЕЧЕСКОЙ НАДПИСИ ПЕЧАТИ
АШУШИ, ПИТИАШХА ИВЕРОВ ГУГАРКА

ՐԱՇ ԲԱՐՏԻԿՅԱՆ

Р е з ю м е

В ежемесячнике Армянского католикосата "Эчмиадзин" (1999 г., № 4) была опубликована наша статья, посвященная загадочной фразе во "Введении" "Истории Иракла" автора VII в. Себеоса. В переводе К. Патканяна она гласит: "Во время упадка владычества Аршакидов в Армении, по прекращении правления царя Врамшапуха, покорил эту страну *народ Каркедомского княжества*. Он вместе с злокачественными и главными магами и со всеми значительными вельможами царства своего возымел страшное и ужасное намерение уничтожить в Армении плоды благоверия". В переводе же Ст. Малхасянца она гласит: "Когда в армянской земле пришла в упадок династия Аршакунийская и прекратилось царство царя Врамшапуха, страной этой (т. е. Арменией. — Р. Б.) завладел *род Карк'edomской династии*. Он, в согласии со злобствующими *главными магами* и вместе со всеми главными нахарарами своего царства задумал страшную и грозную мысль: искоренить в Армении плоды благоверия". П. Мурадян в своей относящейся к тому же вопросу статье (см. сноску № 6) ставит знак равенства между "*народом Каркедомского княжества*" ("*родом Карк'edomской династии*") и "персами" и уверенно считает, что "в IV-VII вв. у армян *персы* воспринимались и как каркедомайцы". Мы решили эту загадку, показав, что Каркедомайцы — это название служителей зороастрийского центра Сасанидского Ирана, расположенного в устье реки Евфрат, известного как Каркедомай (также — Карка до Майшан), Месена греко-римских источников. Там же находился "Магустан" — центр персидских магов. Таким образом, Каркедомайцы — это высшее зороастрийское духовенство, названное так по имени местности. Все исследователи, интересовавшиеся вышеупомянутой фразой Себеоса, отме-

чали идентичность загадочных "Каркедомайцев" с ΚΑΡΧΗΔΩΝ печати питиашха иверов (Гутарка) Ашуши. Надпись гласит: ΑΣΟΥΣΑΣ ΠΙΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ. Последнее слово истолковывалось как Гутарк, Колхида, Кахети. Совершенно иначе понимает его П. Мурадян. Считая ΚΑΡΧΗΔΩΝ печати топонимом-этнонимом, он отождествляет понятие "Сасанидская Персия" с "ΚΑΡΧΗΔΩΝ": "В IV – VII вв., – пишет он, – Сасанидская Персия воистину (!) узнавалась также по имени Кархедон". Кархедон встречается и в VII армянском апокрифическом "Видении" Даниила, который П. Мурадян отождествляет с ливийским городом Ганнибала Кархедоном/Карфагеном. Мы пришли к выводу, что автор апокрифа имел в виду вовсе не ливийский город, а упомянутый выше зороастрийский центр, и объяснение П. Мурадяна, что мол, "страна, именуемая Персией, помещается (!) на севере Африки, и отождествляется с Кархедоном/Карфагеном", неубедительно и беспочвенно. ΚΑΡΧΗΔΩΝ печати Ашуши не топоним, а имя прилагательное (как ΜΑΚΕΔΩΝ – македонский, ΛΑΚΕΔΑΙΜΩΝ – лакедемонский, ΛΑΚΩΝ – лаконский и т. п.), и означает кархедонский, т. е. лицо, происходящее из Каркедомай. Греческая надпись печати Ашуши переводится так: "Ашуша, питиашх иверов, кархедо(май)ский".

SOLUTION OF THE ENIGMA OF THE GREEK INSCRIPTION OF THE SEAL
OF ASHUSHA, PITIASHKH OF IBERES (GUGARK)

HRACH BARTIKYAN

S u m m a r y

In the 4th issue for 1999 of the Armenian Catholicosate's magazine "Echmiadzin" our article dedicated to the mysterious phrase in the "Introduction" of Sebeos's "Heraclius History" (the 7th century) was published. K. Patkanian has translated it as follows: "At the decline of the Arsacids' rule in Armenia, after the government of the king Vramshapuh, the *people of Karkhedom principality* conquered that country. That people, along with the malevolent and chief magi and all the significant grandees of its kingdom, had horrible and dreadful intention to exterminate the fruits of Christianity". In the translation of St. Malkhasiants the same phrase is read like this: "When the dynasty of Arsacids fell into decay in Armenia and the rule of the king Vramshapuh came to its end, the *kin of the Kark'edom dynasty* took possession of that country (i.e. Armenia - H.B.). That kin, by consent of the malicious *chief magi* and all the principle *nakharars* of its kingdom conceived a dreadful and menacing plan: to extirpate the fruits of Christianity in Armenia". P. Muradian in his article (see note № 6) dedicated to the same subject, puts sign of equality between the "*people of the Karkhedom principality*" ("*kin of the Kark'edom dynasty*") and "*the Persians*". He contends that "in the 4th–7th centuries the Armenians perceived the *Persians* also like *Karkedomayans*". In the above mentioned article we resolved this enigma showing that *Karkedomayans* were the priests of the Zoroastrian center of the Sasanid Iran, located at the mouth of the Euphrates river, known as Karkedomay (also as Karka do Mayshan), Mesena in the Greek-Roman sources. "Magustan" – center of the Persian magi was also situated

there. Thus, *Karkedomayans* were the supreme Zoroastrian clergy, named after the name of the place. All the researchers who have ever paid attention to the above mentioned sentence of Sebeos noted the identity of the mysterious *Karkedomayans* with ΚΑΡΧΗΔΩΝ on the seal of the Iberias's (Gugark) pitiashkh Ashusha. The inscription says: ΑΣΟΥΣΑΣ ΠΙΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ. The last word was interpreted as Gugark, Colchis, Cakhet. The understanding of P. Muradian is absolutely different. He considers ΚΑΡΧΗΔΩΝ of the seal as toponym-ethnonym and equates the concept "Sasanid Persia" with "ΚΑΡΧΗΔΩΝ": "In the 4th–7th centuries, – he writes, – Sasanid Persia in truth (!) was known under the name Karkhedon". We also meet the name Karkhedon in the Armenian apocryphal 7th "Vision" of Daniel which P. Muradian equates with the Lybian town of Hannibal Karkhedon/Carthage. We came to the conclusion that the author of the apocryph had in mind not that Lybian town but the above mentioned Zoroastrian center and that the explanation of P. Muradian that "the country named Persia found room (!) in the north of Africa and was equated with Karkhedon/Carthage" is unconvincing and groundless. ΚΑΡΧΗΔΩΝ from the seal of Ashusha is not a toponym, it is an adjective (like ΜΑΚΕΔΩΝ - Macedonian, ΛΑΚΕΔΑΙΜΩΝ - Lacedaimonian, ΛΑΚΩΝ - Laconian and so on) and means Karkhedonian, i.e. a person of Karkadomay origin. The Greek inscription of the Ashusha's seal is translated as follows: "Ashusha, pitiashkh of Iberes, Karkhedonian (Karkhedomayan)".